Այն բոլոր տեղերում, ուր հարսի գնումը պահպանուել է քիչ թէ շատ անարատութեամբ, եղած փաստերի հիման վրայ կարելի է եզրակացնել, որ *գլխագինը* (բաշլըղը, հաղէմասին և ծծագինը) և ընդհանրապէս հարսի համար վճարելիք գումարը յանձնւում է աղջկայ հօրը։ Այլապէս չէր էլ կարող լինել։ Գնման սովորութիւնը քիչ թէ շատ ծաղկում է մեր ժողովրդի մէջ այնտեղ, ուր նահապետական ընտանիքի կազմը տակաւին կանգուն է մնացել։ Հայ նահապետական ընտանիքը, կազմելով թէ տնտեսական և թէ սոցիալ–իրաւաբանական տեսակէտից մի առանձնակի միաւոր, հիմնուած է համայնական գաղափարի վրայ։ Այդ համայնական ընչական սկզբունքի համեմատ *տանուտէրը*, *նահապետը*, *տան մեծը* հանդէս է գալիս հասարակական փոխադարձ յարաբերութիւնների մէջ իբրև ներկայացուցիչ իւր ընտանիքի, իբրև պատասխանատու անձն այն տնտեսական-իրաւաբանական համայնքի, որի տէրն է։ Օժտուած լինելով իւր ընտանիքի անդամների վերաբերմամբ անսահման իրաւունքով, patria potestas-ով, խօսք չկայ, որ ընտանիքի հայրն իւր այդ լիազօրութիւնը կըտարածէր նաև իւր աղջկայ համար ստացուած գումարի վրայ, որը իսկապէս, իրաւաբանօրէն նայած, դառնում է ոչ միայն հօր, այլ և ամբողջ ընտանեկան համայնքի անբաժանելի սեփականութիւնը [1])։ Բացի դրանից՝ զանազան օրինակներից երևում է, որ աղջկայ հօր տրուած գումարի հետ միևնոյն ժամանակ աղջկայ ընտանիքի մօտակայ միւս անդամներն էլ բաներ են ստանում. մայրը, եղբայրը, քոյրը ստանում են դերիացու, կապացու կամ չուխացու, գուլպա, քօլօս, գօտի, եայլուխ և այլն։ Սակայն այս վերջին ընծայաբերութիւնները նորագոյն ժամանակի երևոյթներ են և բնաւ չեն խախտում այն սկզբունքի էութիւնը, որի մասին է մեր խօսքը։ Հարմնացուի համար տրուելիք գումարի էական մասը՝ *գլխագինը*, որի մէջ է իսկապէս պար-

[1]) Տես մեր յօդուածը՝ Очерки по обычному семейному праву армянъ—„Кавказскій Вѣстникъ“ 1902 г. № 1.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան